



## ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 40 ՏԱՐՈՒՄ».— Այս վերնագիրն է կրում ակադեմիկոս Վիկտոր Հ. Համբարձումյանի գիրքը, որը վերջերս լույս է բնծալել Հայկական ՍՍԻ Գիտությունների ակադեմիայի հրատարակությունը:

Մեծանուն գիտնականը իր աշխատության մեջ խոսում է հայրենական և համաշխարհային գիտության մեջ մեր գիտնականների մտքածած արժեքավոր ավանդի մասին ֆիզիկո-մաթեմատիկական, երկրաբանական, քիմիական, տեխնիկական, կենսաբանական, գյուղատնտեսական, բժշկական և հասարակական գիտությունների բնագավառում: Գրքում հանգամանորեն ցույց է տրվում նաև գիտական աշխատանքի թափն ու մակարդակը Հայաստանում:

ՆՈՐ ՏՎՅԱԼՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԴԱՐՑԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.— Վերջերս Հայկական ՍՍԻ Գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի նիստում հանրագումարի բերվեցին Ենեզավիթի պեղումների արդյունքները:

Պեղումներից ստացված հնագիտական նյութերը նոր լույս են սփռում Հայաստանի հնագույն պատմության մի շարք հարցերի վրա: Պեղումների ժամանակ բացվեցին երկու կլոր կացարաններ և նրանց հետ կապված շուրջ տասը բառանկյուն շենքեր՝ բնակարան, արհեստանոց, բրուտանոց, գոմ և այլն: Պեղվել է նաև բնակատեղին շրջապատող պարսպի մեկ հատվածը:

Մինչև վերջերս Հայաստանի էնեոլիթը (պղնձե դար) դիտվում էր ընդհանրապես որպես միատարր մի ժամանակաշրջան, շուներ իր ներքին զարգացման առանձին աստիճանների բաժանումը: Ենեզավիթի և մյուս բնակատեղիների հետազոտությունների շնորհիվ պարզվել և որոշակի ժամանակագրության են ենթարկվել Հայաստանի էնեոլիթի պատմության վաղ, միջին և ուշ ժամանակաշրջանները, որոնք ընդգրկում են շուրջ երկու հազար տարի: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են մեծ թվով խեցիներ, բարե և ոսկրե

գործիքներ, հացահատիկի մնացորդներ, եղջերավոր անասունների ոսկորներ և այլն:

Մինչև վերջերս գիտությանը պարզ չէր նաև մեզոլիթի (միջին բարե դար) և էնեոլիթի (պղնձե դար) միջև ընկած մի մեծ ժամանակաշրջան: Մնում էր անբացատրելի հազարավոր տարիներ ընդգրկող մի ամբողջ ժամանակաշրջան: Արշավախմբի հայտնաբերած նյութերը լուծեցին նաև այդ խնդիրը և ամբողջովին հաստատեցին Հայաստանում էնեոլիթի գոյությունը, որի բնակատեղիները հանդիսանում են հողագործական-անասնապահական ուշ մեծ համայնքների բնակավայրեր՝ տնտեսության զարգացման և կուլտուրայի համեմատաբար ցածր մակարդակով:

Վեցերորդ հազարամյակի վերջում (մ. թ. ա.) Արարատյան դաշտավայրում ձևավորվել են հողագործական և անասնապահական առաջին օջախները, զարգացել է նոր մշակույթ՝ զարգացման բարձր աստիճանով: Արարատյան հովտի առաջին երկրագործները հին աշխարհի ինքնատիպ մշակույթ ստեղծողներից են: Այդ ժամանակ է ձևավորվել Հայաստանում նստակյաց կյանքի անցած բնակչության հնագույն մշակույթը, որը ժամանակակցորեն հասակակից է Նեղոսի և Տիգրիսի հովիտների առաջին նստակյաց բնակչության մշակույթին:

Նոր պեղումների միջոցով հաստատված է Հայաստանի տերիտորիայում բնակվող մարդու պատմության անընդհատ զարգացումը, սկսած մարդկային հասարակության պատմության արշալույսից մինչև պղնձե դարը ներառյալ:

ՎԻՃԱԿՄ ՍԱՐՈՅԱՆԻ ՊԻՆՍԸ ՀԱՅ ԲԵՄՈՒՄ.— Նրկվանի Գարրիել Սունդուկյանի անվան հայկական ակադեմիական դրամատիկական թատրոնի խաղացանկը հարստացավ և մեկ բեմագրությամբ Բատրնի տաղանդավոր կուլեկտիվը վերջերս մեծ հաջողությամբ բեմադրեց Վ. Սարգսյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսը:

Նրկանի թատերասեր հասարակությունը ջերմորեն դիմավորեց «Իմ սիրտը լեռներում է» պիեսի նոր

ներկայացումը: Պիեսը բեմադրել է թատրոնի գլխավոր ռեժիսոր Վ. Աճեմյանը: Ներկայացման երաժշտությունը գրել է Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր դերժիշ Ա. Բաբաջանյանը:

Ռ. ՏԱԳՈՐԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԸ.— Վերջերս Հայաստանի Գրողների միության դահլիճն էին հավաքվել գրողներ, փենսյոներ, ուսուցիչներ և ուսանողներ, նշելու համար հնդիկ մեծ բանաստեղծ Ռ. Տագորի ծննդյան հարյուրամյակը:

Բանաստեղծ Հ. Հովհաննիսյանի բացման խոսքից հետո Տագորի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցեց բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Շահումյանը:

Տագորի ստեղծագործությունները վաղուց դուրս են եկել իրենց հայրենիքի սահմաններից, թարգմանվել են բազմաթիվ լեզուների և մտել համաշխարհային գրական ֆոնդը: Նրա գործերի հայերեն առաջին թարգմանությունները կատարվել են 1916—1919 թվականներին:

Սկսած 1922 թվականից Տագորի ստեղծագործություններից շատերը հրատարակվել են Հայաստանի Պետական հրատարակչության կողմից:

Տագորը աշխարհին հայտնի է նաև իր մի շարք քննադատական, հրապարակախոսական, գրական-էսթետիկական և փրկիսոփայական գրվածքներով: Հարուստ է մեծ մտածողի թողած գրական ժառանգությունը: Նա ունի հիսուն բանաստեղծությունների ժողովածու, վեպ և վիպակ, հարյուրից ավելի պատմվածքներ, 30 պիես և մոտ 200 հրապարակախոսական հոդվածներ:

ՏԱՂԱՆԳԱՎՈՐ ՋՈՒԹԱԿԱՆԱՐ ՄԱՆՈՒԿ ԲԱՐԻՔՅԱՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Վերջերս շրջագայական համերգներ տալու նպատակով Երևանում էր գտնվում Լոնդոնի երաժշտական արքայական ակադեմիայի հանդամանոթ ջութակահար պրոֆեսոր Մանուկ Բարիքյանը:

Նա երկու ելույթ ունեցավ Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում: Մենահամերգի ժամանակ տաղանդավոր ջութակահարը կատարեց Բախի, Մոցարտի, Ռավելի և այլ կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Երկրորդ համերգի ժամանակ Բարիքյանը հանդես եկավ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ, ղեկավարությամբ արվեստի վաստակավոր գործիչ Օհան Դուրյանի և կատարեց Մոցարտի 5-րդ սիմֆոնիան:

Մայրաքաղաքի երաժշտասեր հասարակայնությունը չերմոռնե դիմավորեց տաղանդավոր հայ արվեստագետին:

Մանուկ Բարիքյանը համերգներով հանդես է եկել նաև Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում, Ռիգայում և այլ քաղաքներում:

ՍՓՅՈՒՌԱՔԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ՅՈՒՑԱՆԸ.— Վերջերս Երևանի Արվեստի աշխատողների տանը բացվեց Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 40-ամյա հոբելյանի առթիվ Հայրենիք աչցելած սփյուռքահայ նկարիչներ-Բյուզանդ

Քոփալյանի (Ֆրանսիա), Չիկ Դամատյանի (Ռումինիա), տիկին Ռամոս Մեխիայի (Արգենտինա) ստեղծագործությունների ցուցահանդեսը 70 աշխատանքներից բաղկացած, որոնց թվում դիմանկարներ, նատյուր-մորտեր և ժաղրանկարներ:

Ցուցահանդեսի բացմանը ներկա էին Սովետական Հայաստանի 40-ամյակի առթիվ Երևան ժամանած սփյուռքահայության ներկայացուցիչներ, սովետահայ նկարիչներ, կուլտուրայի և արվեստի աշխատողներ: Ցուցահանդեսի բացումը կատարեց նկարիչների միության նախագահ Ռ. Պարսամյանը: Ապա Բ. Փոփալյանի, Չիկ Դամատյանի և Ռ. Մեխիայի ստեղծագործությունների մասին զեկուցեցին արվեստագետներ Ա. Սարգսյանը, Մ. Արեղյանը և Գ. Խանջյանը:

Վերջում այս սրտառուլ հանդիպման և իրենց գործերի ցուցադրման համար շնորհակալության և երախտագիտության չեղմ խոսք ասացին սփյուռքահայ նկարիչներ Չիկ Դամատյանը, Բյուզանդ Քոփալյանը և տիկին Ռամոս Մեխիան:

ՋՈՒԹԱԿԱՆԱՐ ԴԱՎԻԴ ՕՅՍՏՐԱԽԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Վերջերս Երևանի Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում երկու համերգներով հանդես եկավ սովետական ակադեմիայի ջութակահար, ՍՍՌՄ ժողովրդական արտիստ Դ. Օյստրախը:

Առաջին համերգի ծրագրի կենտրոնական համարն էր Բեթհովենի հանճարեղ ստեղծագործություններից «Կրկնյայն սոնատ»-ը: Այս ստեղծագործության կատարման ժամանակ Դ. Օյստրախը իրեն դրսևորեց որպես կլասիկ ոճի մեծ գիտակ, խոր և լուրջ երաժիշտ: Մի առանձին ոգևորությամբ նա կատարեց երկրորդ վարիացիոն մասը, որտեղ ցուցաբերեց բարձր ձաշակ, երանգների բազմազանություն: Մեծանուն արվեստագետը հաջողությամբ կատարեց նաև Վիտալիի «Զապկոնա»-ն, Պրոկոֆևի «Ռոմեո և Ջուլիետա» բալետի երեք ֆրագմենտները, Դերյուսիի սոլ միևոր սոնատը, Շոպենի «Կոնցերտային կապրիս»-ը և այլ պիեսներ:

Մայրաքաղաքի երաժշտասեր հասարակայնությունը մեծ ուշադրությամբ ունկնդրեց և ըստ արժանության դնահատեց մեծ արվեստագետին:

ՄԱՏՆԵՆԱՐԱՆԻ ՄԻԿՈՅԻԼՄԵՐԸ.— Հնատիպ և հազվագյուտ թերթերի և ամսագրերի քաջայված օրինակները պահպանելու և սակայն ընթերցող լայն հասարակության համար մատչելի դարձնելու նպատակով պատրաստվում են միկրոֆիլմեր: Նկարող և ընթերցող ապարտի շնորհիվ, նկարչական ժապավենի վերածված հնատիպ և հազվագյուտ պարբերականներն ու գրքերը ցանկացված րոպեին դառնում են օգտագործելի:

Արդեն պատրաստ են 8 անուն հնատիպ և հազվագյուտ պարբերականների միկրոֆիլմերը: 167 տարի է անցել այն օրվանից, երբ Հնդկաստանի Մադրաս քաղաքում Հարություն քահանա Շավոնյանի նախաձեռնությամբ լույս ընծայվեց առաջին հայկական ամսագիրը՝ «Ազգաբար»-ը, որի միակ օրինակը պահվում է Մատենադարանում: Առաջին միկրոֆիլմը նվիրված է «Ազգաբար»-ին: Մյուս պատրաստի միկրոֆիլմերն են. «Շտեմարան», տարեգիր, Կալկաթա, 1821—1828 թ. թ.,

խմբագիր Մարտիրոս Մկրտչյան Շիրազեցի, 26 էջից. «Ազգասեր», շաբաթաթերթ, Կալիաթա, 1845—1848 թ. թ., խմբագիր Մեսրոպ Թադիսթյանց, գրաբար, 8 էջից. «Մեղու», հանդես կիսամյա, Կոստանդնուպոլիս, 1856—1874 թ. թ., խմբագիր Հարություն Գ. Սվաճյան, իսկ հետո 1843 թվականից Հովհաննես Հովույան և Աբրահամ Մուրադյան, սկզբում 24 էջից, իսկ հետո 1859 թվականից տասնօրյա 4 էջից, 1870 թվականից եռօրյա հանդես, 1872 թվականից խմբագիր Հակոբ Պարոնյան. «Ազատության ավետարան», Մոսկվա, 1884 թ., հեղափոխական անլեզու թերթ, հրատարակվել է մի քանի համար. «Արևիկ», հանդես կիսամյա, Փարիզ, 1855—1856 թ. թ., խմբագիր Ստեփան Ոսկան, 32 էջից, շարունակությունը «Արևմուտք», «Արևմուտք», կիսամյա, Փարիզ, 1859—1865 թ. թ., խմբագիր Հ. Ս. Ոսկանյան (Ստեփան Ոսկան), 8 էջից, 1859 թվականից 24 համար, 1884 թվականից 8 համար, 1865 թվականից 3 համար. «Նավասարդ», ամսագիր, Բուխարեստ, մեծադիր, 1923—1924 թ. թ., խմբագիր Հ. Ճ. Միրունի, 32 էջից:

Երեմյա ԱՆՆԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄԵՋ.— Ներկայումս Երեմյանի բոլոր շրջաններում ծավալվում է մեծ շինարարություն: Միայն յոթնամյակի տարիներում մայրաքաղաքում պետք է կառուցվի չորս երկու միլիոն բառակուսի մետր բնակելի տարածություն: Նոր գլխավոր պլանի համաձայն, բնակարանային շինարարությունը հիմնականում կենտրոնացվում է քաղաքի երեք շրջաններում՝ կենտրոնական մասում, Հրազդանի աջ ափին և Կոմիտասի շրջանում:

Մայրաքաղաքի հիմնական միջուկի վերակառուցումը ղգալիորեն կբաժնվի բնակչության կենսապայմանները, որովհետև նոր փողոցների կառուցմանը զուգընթաց, տարվելու է ներթափանցալի տերիտորիաների բարեկարգում՝ բակերի կանաչապատում, սպորտային և մանկական փողերի հրապարակների, կենցաղային սպասարկման օբյեկտների շինարարություն:

Շինարարական աշխատանքները լայն ճակատով շարունակվում են Երևանի շրջանում, Հրազդանի աջ ափին: Այստեղ մինչև 1965 թվականը ամբողջովին ավարտվելու է 14 բնակելի թաղամասերի կառուցումը և շահագործման է հանձնվելու շուրջ 600 000 բառակուսի մետր բնակելի տարածություն:

Մոտակա տարիներին կառուցվելու են նաև Սունդուկյանի անվան պետական գրադատիկական թատրոնի և Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնի

հյուպատոս շենքերը: Զգալիորեն ընդարձակվելու է կինոթատրոնների, գրադարանների և ակումբների ցանցը: Այժմ ավարտվում է Հրազդանի ձորում հանդիսության գոտու նախագծի մշակումը:

Մոտ ապագայում իրագործվելու է նաև «Հաղթանակ» կամուրջից ոչ հեռու արհեստական լճի կառուցումը:

ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆԻ 60-ԱՄՅԱԿԸ.— Մայիսի 22-ին, Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում նշվեց գրող Նաիրի Զարյանի ծննդյան 60-ամյակը:

Հանդիսավոր նիստը բացեց Հայկական ՍՍԻ կուլտուրայի մինիստր Հ. Մարգարյանը «Ն. Զարյանի կյանքն ու ստեղծագործությունը» գեկուցումով հանդես եկավ գրող Գ. Բորյանը: Եղբայրական ռեսպուբլիկաների գրողների, արվեստի, գրականության ներկայացուցիչների անունից լավեցին ողջույնի խոսքեր, կարդացվեցին հեռագրեր՝ բարի ցանկություններով գեղուն գրվատիքով, ուղղված գեղարվեստական խառքի վարպետ, տաղանդավոր գրող Ն. Զարյանին:

Վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ հոբելյարը:

ՍԱՐՄԵՆԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԸ.— Լրացավ բանաստեղծ Սարմենի ծննդյան 60-ամյակը: Ապրիլի 17-ին, Հայաստանի գրողների միության տանը, տեղի ունեցավ երեկո՝ նվիրված բանաստեղծի ծննդյան 60-ամյակին:

Ավելի քան երեք ու կես փասնամյակի գրական ճանապարհ է անցել Սարմենը: 1925 թվականին լույս տեսավ նրա առաջին գրքուկը: Դրան հաջորդել են «Թռիչք», «Երգարան», «Աստղեր», «Հայրենիք», «Հատընտիր», «Գազաթները կարոտը», «Հայրենի տուն», «Կարոտի կրակներ», «Հայոց սիրտ» ժողովածուները: Նա գրել է մի շարք պոեմներ՝ «Լուսնի հոգի», «Հերոսական մահ», «Խանդավառ-խաթուն», «Հայտնի ու Բարթոլոմե», «Հայոց սիրտ»:

Սարմենն է Հայաստանի Պետական հիմնի հեղինակը: Նրա տեքստերով գրված բազմաթիվ երգեր մեր ժողովրդի սեփականությունն են դարձել, մտել են նրա կենցաղի մեջ:

Բարձր գնահատելով Սարմենի ծառայությունները, Սովետական կառավարությունը նրան պարգևատրել է «Կարմիր աստղ» և «Պատվո իշան» շքանշաններով:

Այժմ, իր 60-ամյակը ապրող բանաստեղծը լի է ստեղծագործական ավունով և երգեր հյուսելու հնարավորություններով:

